

4.2.2. Մարդասիրական օգնություն

Ըստ ԼՂՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության տվյալների, 2017 թվականի ընթացքում մարդասիրական օգնության կարգով ԼՂՀ են ներմուծվել 194688.2 հազ. դրամի ապրանքներ: Ստացված մարդասիրական օգնության 35.2 տոկոսը կազմել են դեղորայք և բժշկական տարբեր ապրանքները, 19.9 տոկոսը՝ զանազան շինանյութերը, 17.2 տոկոսը՝ տարբեր տեսակի ապրանքները, 13.1 տոկոսը՝ ապարատները և սարքերը և այլն:

ԱՀ ներմուծված մարդասիրական օգնության ծավալն ըստ առանձին ապրանքախմբերի

	2016թ. հունվար-դեկտեմբեր	2017թ. հունվար-դեկտեմբեր	Աճի տեմպը (%)
Ընդամենը	493441.4	194688.2	39.5
<i>այդ թվում՝</i>			
Անասնաբուծության և բուսաբուծության ծագում ունեցող սննդարդյունաբերության արտադրանք	9788.5	-	-
Փայտեղեն և նրանից պատրաստված արտադրանքներ	20185.8	-	-
Նախկինում օգտագործված մանածագործական արտադրանք	157.3	-	-
Նոր կոշիկ	4689.0	6945.4	148.1
Հագուստեղեն, գլխարկներ, հովանոցներ	90.8	8760.7	96.5 անգ
Նախկինում օգտագործված կոշիկ	217.5	403.2	185.4
Նախկինում օգտագործված հագուստ	1780.1	4730.2	2.7անգ
Տարբեր տեսակի գուլպաներ և գուգագուլպաներ	19.4	1.2	6.2
Ապարատներ և սարքեր	4277.0	25534.4	6.0 անգ
Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ	32887.3	7451.9	22.7
Գեղորայք և բժշկական տարբեր ապրանքներ	235102.1	68532.1	29.1
Զանազան արդյունաբերական ապրանքներ	-	-	-
Զանազան շինանյութեր	69091.5	38761.8	56.1
Տարբեր տեսակի ապրանքներ	115155.1	33567.3	29.1

2017 թվականին նախորդ տարվա համեմատ մարդասիրական օգնության ծավալը նվազել է 60.5 տոկոսով: Մարդասիրական օգնությունը ստացվել է Ռուսաստանի Դաշնությունից, Հայաստանի Հանրապետությունից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Գերմանիայից, Նիդերլանդներից և Շվեյցարիայից:

ԼՂՀ ներմուծված մարդասիրական օգնության ծավալն ըստ երկրների

	Արժեքը, հազ. դրամ		Տեսակարար կշիռը, %	
	2016թ. հունվար-դեկտեմբեր	2017թ. հունվար-դեկտեմբեր	2016թ. հունվար-դեկտեմբեր	2017թ. հունվար-դեկտեմբեր
Ընդամենը	493441.4	194688.2	100.0	100.0
<i>այդ թվում՝</i>				
Ռ-Դ	258132.6	83501.1	52.3	42.9
ՀՀ	144834.8	65747.8	29.4	33.8
Գերմանիա	7586.7	17031.4	1.5	8.7
ԱՄԷ	-	16853.7	-	8.7
Ֆրանսիա	-	5596.8	-	2.9
ԱՄՆ	77558.8	4137.6	15.7	2.1
Չինաստան	-	1819.8	-	0.9
Շվեյցարիա	4008.7	-	0.8	-
Նիդերլանդներ	1319.8	-	0.3	-

Մարդասիրական օգնության ծավալի դինամիկան ըստ տարիների, հազ.դրամ

